ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ռազմավարական ոլորտների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) ծանր արդյունաբերության, քիմիական արդյունաբերության զարգացումը,

2) թանկարժեք քարերի և մետաղների արտադրության զարգացումը և արդյունավետության բարձրացումը,

3) քիմիական արդյունաբերության արդյունավետության բարձրացումը,

4) ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարական այլ ոլորտների զարգացումը:

6. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) ռազմավարական ոլորտների քաղաքականության մշակումը և իրականացումը,

2) ռազմավարական ոլորտների քաղաքականության համակարգումը և արդյունքների գնահատումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ.

7. Վարչության գործառույթներն են՝

1) ռազմավարական ոլորտի պետական քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակման աշխատանքների ապահովումը հետևյալ ոլորտների զարգացման ուղղություններով՝

ա. արդյունաբերության, այդ թվում՝ ծանր արդյունաբերության, մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների հանքանյութերի լեռնահանքային արդյունաբերության,

բ. թանկարժեք քարերի և մետաղների արտադրության,

գ. քիմիական արդյունաբերության,

2) արդյունաբերության, այդ թվում՝ ծանր արդյունաբերության, քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

3) թանկարժեք քարերի և մետաղների արտադրության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

4) մշակում և իրականացնում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնագավառում քաղաքականությունը,

5) ռազմավարական ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքների և դրանց իրականացման մասնակցության ապահովումը,

6) ռազմավարական ոլորտի արդյունաբերության գերակա ուղղությունների որոշման համար առաջարկությունների մշակման աշխատանքների ապահովումը,

7) իր իրավասության սահմաններում՝ ռազմավարական ոլորտներում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացման աշխատանքների ապահովումը,

8) ռազմավարական ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վեր հանումը և դրանց վերացման ուղղությամբ նախարարին առաջարկություններ ներկայացումը,

9) ռազմավարական ոլորտներում ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքների ապահովումը,

10) նախկինում քիմիական արտադրություն իրականացնող և ներկայումս չգործող կամ մասնակի գործող ընկերությունների վիճակի ուսումնասիրման ու գնատատման, ինչպես նաև դրանց վերագործարկման ուղղությամբ առաջարկությունների մշակման աշխատանքների ապահովումը,

11) ոլորտային և ճյուղային քննարկումների միջոցով ծանր արդյունաբերության զարգացման խոչընդոտների վեր հանման աշխատանքների և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման ապահովումը,

12) ծանր արդյունաբերական ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների առկա տեխնոլոգիական մակարդակի գնահատման համար առաջարկությունների նախապատրաստման և մշակման աշխատանքների ապահովումը,

13) Վարչության իրավասության սահմաններում՝ սև և գունավոր մետաղների թափոնների և ջարդոնի շրջանառության հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստման մասնակցության ապահովումը,

14) իր իրավասության սահմաններում՝ ԵԱՏՄ շրջանակներում ոլորտային համագործակցության զարգացմանն ու խորացմանը մասնակցությունը,

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Ծանր արդյունաբերության բաժին,

2) Թանկարժեք մետաղների և քարերի բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V . ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Ծանր արդյունաբերության բաժնի հիմնական գործառույթներն են՝

1) ծանր արդյունաբերության ոլորտում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացումը,

2) ծանր արդյունաբերության քաղաքականության մշակումը,

3) ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

4) ծանր արդյունաբերության մեջ ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակումը,

5) ծանր արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

6) ծանր արդյունաբերական ոլորտում գործունեություն ծավալող ձեռնարկությունների առկա տեխնոլոգիական մակարդակի գնահատման համար առաջարկությունների մշակումը,

7) քիմիական արդյունաբերության զարգացման պետական քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակումը,

8) քիմիական արդյունաբերության քաղաքականության մշակումը,

9) քիմիական արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակումը,

10) քիմիական արդյունաբերության ոլորտներում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին մասնակցությունը,

11) քիմիական արդյունաբերության ոլորտներում տիրող վիճակի մոնիթորինգի իրականացումը,

12) ոլորտներում իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական բացթողումների, ինչպես նաև գործող ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը,

13) քիմիական արդյունաբերության ոլորտներում ազգային կարևորագույն ներդրումային և նորարարական նախագծերի ձևավորման, իրականացման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկների մշակումը,

14) նախկինում քիմիական արտադրություն իրականացնող և ներկայումս չգործող կամ մասնակի գործող ընկերությունների վիճակի ուսումնասիրման ու գնատատման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև դրանց վերագործարկման ուղղությամբ առաջարկությունների մշակումը,

15) իր իրավասության սահմաններում՝ ԵԱՏՄ շրջանակներում ոլորտային համագործակցության զարգացմանն ու խորացմանը մասնակցությունը,

16) իր իրավասության սահմաններում մասնակցում է տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակմանը, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին,

17) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

11. Թանկարժեք մետաղների և քարերի բաժնի հիմնական գործառույթներն են.

1) մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների հանքանյութերի լեռնահանքային արդյունաբերության քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակումը,

2) մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների հանքանյութերի լեռնահանքային արդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակումը,

3) մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների հանքանյութերի լեռնահանքային արդյունաբերության ոլորտի արդյունաբերության գերակա ուղղությունների որոշման համար առաջարկությունների մշակումը,

4) շթանկարժեք քարերի և մետաղների արտադրության քաղաքականության մշակման աշխատանքների ապահովումը,

5) թանկարժեք քարերի և մետաղների արտադրության քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակումը,

6) մշակում և իրականացնում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնագավառում քաղաքականությունը,

7) իր իրավասության սահմաններում՝ սև և գունավոր մետաղների թափոնների և ջարդոնի շրջանառության հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

8) իր իրավասության սահմաններում՝ ԵԱՏՄ շրջանակներում ոլորտային համագործակցության զարգացմանն ու խորացմանը մասնակցությունը,

9) իր իրավասության սահմաններում տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակումը, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին մասնակցությունը,

10) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին և արտաքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: